Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ ՀԵՌԱՎԱՐ ԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Տիգրան Խաչատրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար (ենթախորհրդի նախագահ)
Նաիրա Մարգարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Կարեն Գևորգյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ ՓՄՁ զարգացման կենտրոնի տնօրեն
Կարինե Սարգսյան	Ամերկայի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Վլադիմիր Շատվերով	Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատ
Էդուարդ Բադալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ
Ռուբեն Օսիպյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Տիգրան Շահբազյան	«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա»
Դիանա Սարումովա	Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի գործադիր տնօրեն
Տիգրան Քեյան	Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ
Գևորգ Պողոսյան	ՎԶԵԲ կողմից աջակցվող և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ Կառավարման Հիմնադրամ»-ի կողմից ֆինանսավորվող Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Իզաբելա Հովհաննիսյան	ՎԶԵԲ կողմից աջակցվող և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ Կառավարման Հիմնադրամ»-ի կողմից ֆինանսավորվող Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ կողմից աջակցվող և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ Կառավարման Հիմնադրամ»-ի կողմից ֆինանսավորվող Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար

Դիանա Հարությունյան	ՎԶԵԲ կողմից աջակցվող և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ Կառավարման Հիմնադրամ»-ի կողմից ֆինանսավորվող Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Հռիփսիմե Հովհաննիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

ՀԱՐՑ 1. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիգրան Քեյանի, Կարինե Սարգսյանի և Դիանա Սարումովայի ներկայացմամբ քննարկվեցին ՀՀ կառավարության կողմից ընդունված և ներկայումս գործող՝ Կորոնավիրուսի չեզոքացման սոցիալ տնտեսական ծրագրերի հետ կապված խնդիրներն ու առաջարկվող լուծումները:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

1. *Հանձնարարարել ՎԶԵԲ կողմից աջակցվող և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ Կառավարման Հիմնադրամ»-ի կողմից ֆինանսավորվող Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ Դավիթ Աղաջանյանին.*

1-3-րդ և 5-րդ ծրագրերի վերաբերյալ՝ կազմակերպել առանձին աշխատանքային քննարկում և ներկայացնել հիմնավորված ձևավորված լուծումների մասով հստակ առաջարկություններ:

ՀԱՐՑ 2. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ռուբեն Օսիպյանի ներկայացմամբ քննարկվեցին Կորոնավիրուսի չեզոքացման նոր ծրագրերի հետ կապված առաջարկությունները: ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նաիրա Մարգարյանը տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է ՓՄՁ-երի պետական աջակցության համար հատկացված դրամագլխի նշանակալի ավելացում: Նշված մասով, մասնավորապես Մեծ Բրիտանիայի GGF հիմնադրամի կողմից նմանօրինակ ֆինանսական աջակցության պատրաստակամության հաստատատման մասով, տեղեկատվություն ներկայացրեց նաև Գևորգ Պողոսյանը:

Քննարկումներից արդյունքում որոշվեց՝

1. Նախաձեռնությունների համատեղության հարցի շուրջ առանձին քննարկում կազմակերպել՝ շահագրգիռ մասնակիցների, մասնավորապես ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նաիրա Մարգարյանի, Գևորգ Պողոսյանի, Ռուբեն Օսիպյանի և այլ անձանց մասնակցությամբ:
2. Կազմակերպել աշխատանքային քննարկում պետական միջոցառումների հետևանքները բացահայտելու և դրանք չեզոքացնելու առաջարկություններ դուրս բերելու համար՝ Փայլակ Թադևոսյանի համակարգմամբ:

ՀԱՐՑ 3. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ***Հարկային հարցերով՝*** խնդիրները ու դրանց լուծման հետ կապված առաջարկությունները ներկայացրեցին Վլադիմիր Շատվերովը, Ռուբեն Օսիպյանը և Էդուարդ Բաղալյանը:

2. ***Մաքսային և պետական գնումներ հարցերով՝*** խնդիրների ու դրանց լուծման հետ կապված առաջարկությունները ներկայացրեց Ռուբեն Օսիպյանը:

Քննարկումներից արդյունքում որոշվեց՝

1. Դավիթ Աղաջանյանին՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակել համապատասխա ն իրավական նախաձեռնության նախագիծ՝ համագործակցելով Վլադիմիր Շատվերովի և Տիգրան Քեյանի հետ և ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:
2. Էդուարդ Բաղալյանին՝ առանձին գրությամբ իր կողմից ներկայացված առաջարկությունները:
3. Նաիրա Մարգարյանին՝ ՊԵԿ-ի հետ քննարկման արդյունքում ներկայացնել տվյալ կառույցի համապատասխան կոնտակտային անձի վերաբերյալ առաջարկություն:
4. Գևորգ Պողոսյանին՝ կազմակերպել աշխատանքային քննարկում:

---

4. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

1. Ռուբեն Օսիպյանի ներկայացմամբ քննարկվեց ՀՀ աշխատանքային օրենսգրքի ազատականացման հարցը:

Քննարկումներից արդյունքում որոշվեց՝

ՀՀ աշխատանքային օրենսգրքի ազատականացման հարցերը քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ Իզաբելա Հովհաննիսյանի համակարգմամբ:

2. Քննարկվեցին միջազգային վճարային համակարգերը (օրինակ PayPal-ը) և Հայաստանում դրանց ներդրման հետ կապված խնդիրները: Տիկին Մարգարյանը ներկայացրեց ընթացիկ վիճակը և PayPal-ը Հայաստանում կիրառելի դարձնելու հարցը:

Քննարկումներից արդյունքում որոշվեց՝

Ռուբեն Օսիպյանին՝ տրամադրել տեղեկատվություն IDRAM համակարգի և Ամերիաբանկի հնարավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ